

## ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ՝ ԿՐԹՈՂ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՂ\*

### Անահիտ Արայան

Բանալի բառեր՝ բանասիրական ուսումնասիրություններ, ազգային արժանապատվություն, բարոյական արժանիքներ, ժողովրդական բանահյուսություն, ինքնաճանաչողություն, ընտանեկան դաստիարակություն, հայրենասիրություն, ձանաչողական դեր, ազգային արժեքներ:

19-րդ դարում հայ մամկավարժական միտքը, մամկական գրականությունը աննախընթաց զարգացում ապրեց թե մայր հայրենիքում, թե՝ հայոց գաղթօջախներում, ուր գործում էին մի շարք հայկական դպրոցներ, որտեղ դասավանդում էին ճանաչված մանկավարժներ, հայ դպրոցի և լուսավորության գործին նվիրված անհատներ (*Հ. Ալամդարյան, Նիկողոս Զորայան, Մ. Թաղիալյան, Դ. Ալիշան, Խ. Աբովյան, Ս. Նալբանդյան և ուրիշներ*): Նրանց գրական-հասարակական գործունեությունը, դասանած սկզբունքներն ու գաղափարները դարձան հայ պատանու և երիտասարդի կրթության ու դաստիարակության լավագույն գործոններ:

19-րդ դարի 40-ական թթ. հայ մանկավարժական մտքի պատմության մեջ որոշակի ներդրում հանդիսացավ *Դ. Ալիշանի* ստեղծագործությունը: Նրա գիտական-բանասիրական աշխատությունները, մանկավարժական արժեքավոր երկերը վկայում են Ալիշան տեղագրի, պատմաբանի, աշխարհագրագետի, թարգմանչի, հրապարակախոսի անուրանալի վաստակը, որը նման է մի հսկա հիշտակարանի, ուր կարևորագույն տարրը ազգային կրթության ու դաստիարակության խնդիրն է:

Ալիշանի ժամանակաշրջանում *Միխրային* միհարանությունը օտար երկնքի տակ ամեն ինչ անում էր հայեցի դաստիարակության, աշակերտության համար ուսուցման նոր և լավագույն պայմաններ ստեղծելու համար:

Միհարանությունը, շնորհիկ Սուրբիա Սումայյանի, հնարավոր ամեն միջոց գործադրում էր հոգևոր կրթությանը համընթաց գիտական գործը բարեկավելու համար:

1841թ. *Դ. Ալիշանը* նշանակվում է Վենետիկի Պահայելյան վարժարանի ուսուցիչ: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ նա աշխատակցում է *Միխրային*-ների «Բազմավեսէ հանդեսին»:

1848թ. նա նշանակվում է Պահայելյան վարժարանի տեսուչ:

1858-1861թթ. վարում է *Փարիզի Սուրառյան վարժարանի* տեսչի պաշտոնը: 1861թ. վերադարձում է *Ս. Դազար*, 1866 թ-ից նորից նշանակվում Վենետիկի Պահայելյան վարժարանի տեսուչ՝ մինչև 1872թ.: Հետո՝ մինչև մահը, գրադպում է հայագիտությամբ:

Ալիշան-մանկավարժի գերագույն նպատակը հայրենանվեր քաղաքացիներ պատրաստելն էր: Պահայելյան վարժարանում արտասանած ճառում նա ասում է. «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիքներ: Ասել է թե՝ հայրենիքի գոյությունը պայմանավորված է նրան նվիրված անձնագործ քաղաքացիներով:

\* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Իր բազմաթիվ հոդվածներում, բանասիրական, հայրենագիտական ուսումնասիրություններում, Ալիշանը հորդորում է դաստիարակել «աղեկ քաղաքացիներ հայրենիքի համար»:

«Ազգային հասուկ դաստիարակությունն երկում Ալիշանը գրում է, որ ճիշտ այնպես, ինչպես որ հացը ստանալու համար օգտագործում են այլուր, ջուր, աղ, բայց հացերը տարբեր են ստացվում, չնայած նյութը նույնն է, այդպես էլ դաստիարակության հարցում։ Շատ դեպքերում նույն ծևով են դաստիարակում մարդկանց, բայց տարբեր մարդիկ են ծևավորվում։ Ալիշանը կարևորություն է տալիս ազգային դաստիարակությանը։ Չի կարելի հային դաստիարակի անգիտացին, անգիտացուն՝ հույնը և այլն։

Ազգերի արժանիքներից կարելի է վերցնել լավագույնը։ Ազգը նման է պարտեզի։ Լավ ծաղկների հետ կան և մոլախոտեր։ հարցն այն է, թե որ պարտեզի մոլախոտն է շատ, որն էլ լավ մշակվում։ Պետք է ջանք թափել՝ մարդելու մոլախոտերը։ Ճանաչրդական ու դաստիարակչական նշանակություն ունի Դ. Ալիշանի «Անսոց բնական նշաններ» երկը, ուր հեղինակը Գրիգորիկի համար բացահայտում է տարվա ամիսների էությունը։ Ամեն ինչ պատկերավոր ու շոշափելի է, երեսայի սրտին ու հոգուն մոտ, որը և սեր է արթնացնում նրա մոտ առ հայրենիքը, նրա բնությունը, ծիլ ու ծաղիկը, մարդն ու աշխատանքը։

Զարմանալիորեն բնական են գույները։ Ոչ մի անգամ Հայաստանում չեղած հեղինակն այնքան բնական է պատկերում ամեն ինչ, որ մենք տեսնում ենք Հայաստանի բնական ու կենդանական աշխարհին քաջածանոթ հեղինակին, ում համար թանկ ու հարազատ են հայոց աշխարհի ամեն մի մասունքը։ Երկն սկսվում է ապրիլ ամսվա նկարագրությամբ։ «Կտեսնես, կիմանաս, որ սաստիկ հովերը կողադրեն ու անուշ հովեր կուգան, որոնց գեղյուր կըսենք։ Լեռներուն վրայեն ծյուները կիալին, ու գետերը կիշնան։ Անոր համար շատ գետեր ու հեղեղատներ լեցվելով դաշտերը կողինեն»։[1]

Կյանքի զարթոնքն է պատկերում Ալիշանը։ «Գաւռնուկները մորերուն քովեն երթալով կցատկուտեն, կովն ու եզզ իրեն դանդաղությունը մոռացածի պես՝ կժրանան։ Մանր թռչնիկները մեծ ուրախությամբ անդադար կձվարան, կվազվաեն, կծխան։ Այս ամսուս մեջ շատ վարուցան կըլլա և ստունկերը կտնկվեն»։[2] Երկը նաև աշխատանքային դաստիարակության լավագույն օրինակ է, որին մեծ ուշադրություն են դարձել մեր դասական մանկագիրները։ Գեղագիտական դաստիարակության պայծառ օրինակ է մայիս ամսվա նկարագիրը։ Այս անգամ հեղինակը Գրիգորիկին տանում է դեպի գեղեցիկ ծաղկած այգին։ «Սայիսը ամիսներուն մեջ ամենեն գեղեցիկն է. դաշտերն ալ ամենեն ավելի աս ամսուս մեջ զվարժալի կերևան։

Ահա, տես, արկը կելլե, ճառագայթըները լեռներուն ու բարձր ծառերուն գուխները ուսկեզույն կզարնեն։ Անուշ հովիկը, որ թիերը կօրորէ, ծառերույն տերները կշարժե, կարծես թե կփութա արևուն արջևեն վագելով ինաց տվող ըլլալ։

Կտեսնե ս Գրիգորիկ, որ իհմա բոլոր աս ստունկերը ծաղկեր են, բոլորն ալ իրենց հոտը կրուրեն, ամենուն բուրմունքը մեկտեղ խառնված՝ մարդու սիրտը կզմայլեցնեն։ Տես, որչափ տեսակ-տեսակ ծաղիկներ կան։ Եկ ամենեն ալ ժողովենք, փունջ մը կապենք...[3]

Հունիս ամսվա նկարագրությունը հեղինակի պատվիրաններն է։ Ինչպես պարտիզանն է ծգոտում, որ այգում մոլախոտեր չլինեն, որ չխանգարեն պիտանի բույսերին, այնպես էլ հեղինակն է ծգոտում, որ Գրիգորիկը միայն առաքինություն ցանի։

«Քու սիրտ ալ պարտեզ մըն է, Գրիգորիկ, ու պարտիզանը դուն ես։ Նայե, որ առաքինություն միայն ցանես, աճեցնես ու մոլության բույսերը խլես փացնես»։[4]

Հուլիս ամսվա բաժինը աշխատասիրություն է սովորեցնում։ Հեղինակը բացատ-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րում է թե ինչ դեր ունի աշխատանքը մարդու կյանքում: «Եվ այսպես մարդու կյանքն ալ բոլոր աշխատություն է: Առանց այս աշխատության պտուղ չկրնար Վեյելել», -գրում է Ալիշանը:

Աշնան ամիսների նկարագրություններում Ալիշանը բնության գիտակ է, երեխաներին սովորեցնում է, թե ինչպես են հասունանում մրգերը, որոնք են հասունացման նշանները. «Աս պտուղներուն հասած ժամանակը որոշ իմանալը դժվար է: Կամ զի տարի կըլլա, որ շատ, տարի կըլլա, որ ուշ կիանի: Խաղողին հասնելու նշանը՝ ողկոյզին Կորին սևանալն է[5], -բացադրում է Ալիշանը: Երկը նաև հետաքրքիր տվյալներ է հաղորդում, սովորեցնում է լուծել կենցաղային խնդիրները, այսպես.՝ ընկույզին վրայի կանաչ կճեաք հանելեն ետև՝ ողջերը կչորացնեն, կպահեն, իսկ որդնուտաձները կզգմեն ու եղջ կիանեն: Ասելը կգործածվի վառելու, ներկերու հետ խառնելու և փայտերը փայլեցնելու համար:[6]

Խոսելով սեպտեմբեր ամսվա առանձնահատկությունների մասին՝ Ալիշանը խոսում է դաշտային աշխատանքների մասին, ինչպես են հողը նախապատրաստում գարնան գարունքի համար.

-Վերջապես պարապ անցնելու ամիս չկա երկրագործին, ու մեկ ամիս մը պարապ կենա նե, բոլոր տարվոյն վնաս կըլլա: Ասանկ ալ ուսմունք հանգիստ ըլլողը սա միջոցիս, թե որ բոլոր ատենք պարապ անցնե, միտքը կտկարանա ու վերջը շատ կիոգնի:[7]

Ալիշանի բազմաթիվ հոդվածներ նաև մանկական գրականության համար գործնական, ուսուցողական ու ճանաչողական բնույթի երկեր են, որոնց գիտամանկավարժական արժեքն անուրանալի է բոլոր ժամանակների համար:

Ալիշանը փորձում է ուսումը համեյի ու կիրելի դարձնել երեխաների համար: Դրա համար երբեք չի կարելի հուսահատեցնել նրան: Իր հոդվածներում Ալիշանը խոսում է աշակերտների ուսման միջոցով ոգևորելու ձևերի ու միջոցների մասին: Երեխան նախ իր ծնողի ծեռքից է անցնում: Հատկապես մեծ է մոր դերը: Տղան իր ծնողների ծեռքում է իր նախնական ծնք ստանում, որից հետո նրան կրթում և դաստիրակում են վարպետները:

«Թե ով է տղոց ամենեն սիրելի, գորավոր և հարկավոր վարպետը երկում Ալիշանը նշում է, որ ողբայի է այն մարդը, որ կրթության օգուտոր չփափի: Եթե երեխան իր ծնողի ծեռքում կրթության առաջին ծնք չարնի, դժվար կլինի: Անոր է, երբ մարդիք ծնողին ասում են, թե զավակների թշվառության պատճառը հենց իրենք են: Իրավ, ծնողն է ամենասիրելին ու գորավորը իր տղայի: Ով կարող է փափուկ ծաղկին արևից, հովից, անձրկից ու ուրիշ վտանգներից ավելի լավ պաշտպանել, քան այն բույսը, որ ծնել է ծաղկիը և երեխն տերևներով ժածկում է արևի ճանապարհը, կամ ցողերը կաթեցնում է վրան: Ասել է թե՝ ընտանեկան լավ դաստիրակությունը նպաստում է կրթությանը, դպրոցական դաստիարակությանը: Ալիշանի հավաստմամբ՝ քանի-քանի զավակներ են իրենց դժբախտությունից հետո անհծում ծնողներին, որ մարմնավորի հետ հոգևոր կյանք չեն տվել իրենց: Քանի-քանի ծնող իրենց զավակի կրթության համար չհոգալով ամբողջ կյանքում լաց են եղել: Ալիշանը բարձր է գնահատում կրթությունն ու դաստիարակությունը:

-Ամեն բանը առաջ ծնողը պիտի նային, որ բարեպաշտության սկզբունքներ և ետքը ընկերության պարտքեր տպավորեն զավկներուն սիրտը, որպեսզի վերջի վարպետներն ալ հաջողությամբ աճեցնեն զանոնք. ասով աշխարհը ընտիր քաղաքացիներ ու մարդիկ լավ ընկերներ կունենան: Սեր խելդ ազգն ալ կճանչնա, որ իրեն մեկ հատիկ փառքը, պատիկը, հարստությունն ու հաջողությունն է՝ լավ ազգայիններ ունենալ:[8]

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ալիշանը գտնում է, որ «Ամեն ուսմանց գերազանց ուսմունքը արաքինությունն է («Արաքինությունն է զմարդ երջանիկ ընող...»): «Արաքինությունը ամեն բարյաց մեծն է: Արաքինությունը, ըստ Ալիշանի, ամեն հասակի համար է, բայց «աս ալ մեկալներուն պես՝ ավելի մանկանց սիրելի է»:

«Եվս առավել ուսուցիչը և վարպետը ջանան սորվեցնել սա ամենահարկավոր ուսմունքը ամոնց, որ ազգին ու աշխարհին ակմայլություններուն են: Ամեն բանե առաջ տնկեն ան փափուկ սրտերուն մեջ առաքինությանց սերմունքը և միշտ խնամեն ու մշակեն, աշակերտության առօդի օրեն ինչպան ետքի վայրկյանը: Պարամանց ներսը դուրսը գրած ըլլա՝ առաքինությունն է հոս սորվելու ամենահարկավոր ուսմունքը»:[9]

Դ. Ալիշանը մեծ նշանակություն էր տալիս ինքնաճանաչմանը: Պատահական չէ, որ հին հմաստունները իրենց վարժարանների ու դասատեսորերի ձակասին գրում էին՝ «Ծանիր զբեզ»՝ որպես առաջին և ամենահարկավոր դաս (Ճանաչիր քեզ): Ալիշանի երկերի ծանոթագրություններում նշվում է, որ, ըստ Պլատոնի, արտահայտությունը գրված էր «Ռունաստանի Նելֆիր քաղաքում գտնվող Ապոլոնի տաճարի ձակասին»:

«Ծանիր զբեզ» հոդվածում Ալիշանը գրում է. «Եկուոր նայինք, դու ինչ բնավորության տեր ես, ինչ խառնվածքի մարդ ես, ինչ պակասություններ ունիս բնության մեջ, ինչ բանի կարուտ ես մարդ ըլլալու և ինչ դեր պետք է մե՝ առ ծանիր զբեզ և մարդ եղիր»:[10]

Աշխատանքային դաստիարակության լավագույն օրինակ է Ալիշանի «Հովհվը Շիրական պատմվածքների ժողովածուն», որի 4 հոդվածներում հեղինակը գովերգում է գյուղական լյանքը, աննման բնությունը, աշխատանքը, որ ամեն բարիքի ստեղծողն է: Իսկ «Նվեր տղայոց» արձակ գեղարվեստական երկի առանցքը բնության միջոցով երեխային դաստիարակելն է, ինչը նաև Խ. Արովյանի որդեգրած տեսությունն է:

Լինելով Վենետիկի Մոլուածյան վարժարանի «պատմություն» և «բարոյականություն» առարկաների ուսուցիչ (մոտ 20 տարի), հետո տեսչի պաշտոնակատար, ծանոթանալով Եվրոպական առաջավոր մանկավարժության տեսությանն ու փորձին՝ Ալիշանը միշտ էլ խրախուսել է ազգային մշակույթի զարթոնքը: Մանկավարժական բացում հարցեր են արծարծվում «Ի՞ր ազգը չփրողը հավիտյան մարդասեր չըլլար» և պատմանակավարժական բնույթի այլ հոդվածներում:

Ազգային դաստիարակության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ ունի Ալիշանը: «Ազգային հաստուկ դաստիարակություն» հոդվածում Ալիշանը մեծ նշանակություն է տալիս հայեցի դաստիարակությանը: Հային պետք է կրթի հայր, օտարին՝ օտարը: «Ազգին պակասությանց կամ կատարելությանց վրան հոդվածում Ալիշանը նշում է, որ «Ազգային պակսությունը պարտկելի խելացիություն է, բայց պակսությունը չճանշնալ՝ մեծ անխելքություն», «Ազգասիրություն» հոդվածում խոսում է այն մասին, որ լավ դաստիարակությունը կսովորեցնի մարդուն, որ ինքը միայն իր կամ իր ընտանիքի համար չէ երկրի վրա, ավելի մեծ ընտանիք ունի նա: «Դա իր ազգն է:

Խիստ արդիական հնչողություն ունի Ալիշանի «Ազգային պակասություն մը, որ առաջադիմության միջոցները կարգիեն» հոդվածը: Ալիշանը նշում է, որ մարդու համար ամենապատվական բանը լյանքն է, և «շահը հարկավոր է՝ լյանքը պահելու համար: Բայց լավ ապրելը, այսինքն՝ մարդավայել լյանքը ավելի հարկավոր է, քան դյուրությամբ ապրելը: Այստեղից այն դատապարտելի գրույցը, թե քերականությունը հաց չըերեր, գիրն ու գրիշը փոր չեն կշտացներ... Ե Այսպես մտածողները իրենց համար ամենալավ բանը հացն են համարում: Գիտությունը թողած՝ նրանք վաճառականության հետևից են ընկել, որպեսզի հաց ուտեն: «Հաց ուտելու համար աշխարհը եկանք, մարդկանց դպրոց ախոռներն պիտի ըլլան և դասատու խոզերն պիտի առնունք: Հաց

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ուտելով որչափ պիտի ապրիս, շատ-շատ ութունը տարի, իսկ հացի տեղ իմաստություն շահելով՝ հավիտենականություն մը կապրիսե:[11] Ալիշանը բերում է խորենացու, Եղիշեի, Փարպեցու օրինակները, ովքեր իրենց կյանքի նպատակը դարձրին հոգևոր ստեղծումը, այլապես մարդկությունը կզրկվեր հոգևոր այնպիսի սննդից, ինչպիսիք նրանց երկերն էն: Նշված հողվածում Ալիշանը նշում է, որ շատ անգամ մեր նախարար-ների անմիաբանության, քաջապահին հակադրվելու պատճառը եղել են «շահասիրությունը և դյուրակեցությունը»: «Մեր աշխարհին այնչափ ուժնակոխ ըլլալուն մեկ պատճառն աս է», -գրում է Ալիշանը[12]

Հայ ժողովրդական բանահյուսությունը Ալիշանի ստեղծագործությունը սառող հիմնական ակունքներից մեկն է: Եթե կրասիցիզմի հայկական տեսարանները քարոզում էին իգուր ժամանակ չվատնել, չուստոնասիրել ու չքննել ժողովրդական ստեղծագործությունները, ապա Ալիշանը գտնում էր, որ հայ մշակույթը ծնվում է ժողովրդից, ուստի հանրությունը պետք է գրադարձ ազգային երկերի ու ավանդությունների հավաքմամբ ու ուսումնասիրությամբ:

«Ճշմարիտ ազգային մը առջև շատ հարգի բաներ են նաև այն ավանդները, որ բերներերան անցնելով, ինչվան իր օրերը հասած են: Վասնգի ազգի մը պատմությունը, բնավորությունները, սովորությունները, լեզուն և լեզվին զանազան փոփոխությունները ոչ միայն գրավոր պատմություններէ կիմացվին, հապա նաև ան գրավոր հիշատակարաններեն առաջ՝ անգիր ավանդություններով կիսատատվին: Անոր համար է, որ ամենայն ազգաց հին և նոր պատմիչները մասնավոր ջանքերով ետև ելած են հավաքելու ազգային պատմությունները, երգերն ու առակները: Մեր խորենացին ալ շատ երանդուն ջանքերով և իմաստուն ընտրությամբ իր պատմությանը մեջ իրու անգին զանձ հավաքեր ու պահեր է մեզի մեկ քանի հին երգեր և ավանդություններ, որոնց վեճմ գեղեցկությանը վրա ոչ միայն մենք, այլև օտարները կզմային ու կզարմանան»:[13]

Ալիշանը գտնում է, որ բուն ազգային ոգին ազգային նյութոց վրա գրվածքներու մեջ ավելի կերևա, և մեր հայկական բանաստեղծությունն ալ հոն փնտրելու էր, բայց նախնացմեն առ մեզ խիստ քիչ բան հասել է ազգային նյութոց վրա:[14]

Նա դաստիարակության ու կրթության գործում մեծ դեր է տալիս ժողովրդական նյութերին, որովհետև հայեցի դաստիարակությունը պայմանավորված է ազգային ավանդությունների, երգերի, խաղերի, պատմությունների, առակների իմացությամբ: Այդպես է բոլոր բարեկիրթ ազգերի մոտ: «Առանց վերապահության կարելի է ասել, որ հայկական բանահյուսությունը ծևավորվելու և մուս գիտությունների շարուում որպես արանձին առարկա ճանաչվելու և ընկալվելու հարցում գործի առյուծի բաժինը պատկանում է Դ. Ալիշանին», -գրում է գրականագետ Ս. Շնիլյանը:[15]

Խոսելով հայերի ծիրքի, ընդունակությունների մասին՝ Ալիշանը շեշտում է, որ կարևոր ունենալը չէ, այլ գործադրելը և բերում է հետևյալ օրինակը. «Մենք շատ գենքեր ունինք, կըսեր մեկը, սանուկով սուր ունինք, պատերն են հրացաններ կախված են»:

-Եվ անշուշտ, պատին վրա և սմստուկին մեջ կենալուն համար է, քսավ լսող մը, որ ճանձ մը ալ չես հալածած:

-Թե որ կուգենք հավացնել, մանավանդ հավատալ, թե ունինք, -եղրակացնում է Ալիշանը, -պետք է գործածելով ցուցնենք...»:[16]

Սա նշանակում է նաև, որ պետք է գործածել իմանանք այն ամենը, ինչը նպաստում է ազգի բարորությանը, նրա զարգացմանը:

Ալիշանի «Երգ Նահապետին խորագրով ժողովածուն վկան է հեղինակի անկաչառ

## **ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

հայրենասիրության, հայրենի երկրի գովք է, պանդուխտ հայի հոգու մրմունջ, սիրո քննուշ ու զմայլելի մեղեղի... միանգամայն նորություն մեր 19-րդ դարի հայ պոեզիայի բնագավառում, հատկապես կլասիցիզմից ոռմանտիզմին անցնելու դժվարին պրոցեսում:

Ալիշանի թե՛պոեզիան, թե՛արձակը լի են հայրենասիրական կոչերով ու հորդորներով: Նա իր սամերին կոչ էր անում անվար պահել ազգի լեզուն, նրա դպրությունը: Սա հենց հեղինակի գերագույն հայրենասիրության գրավականն է:

Պատահական չէ Դ. Աղայանի Ալիշանին տված բնորոշումը՝ «Նահապետ հազար թռուների»:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Դ. Ալիշան, Երկեր, Ամսոց բնական նշանները, Եր., 1981, էջ 114:
2. Նույն տեղում, էջ 114:
3. Նույն տեղում, էջ 115:
4. Նույն տեղում, էջ 122:
5. Նույն տեղում, էջ 119:
6. Նույն տեղում, էջ 122:
7. Նույն տեղում, էջ 119:
8. Նույն տեղում, էջ 124:
9. Նույն տեղում, էջ 128:
10. Նույն տեղում, էջ 136:
11. Նույն տեղում, էջ 191:
12. Նույն տեղում, էջ 199:
13. Նույն տեղում, էջ 99:
14. Նույն տեղում, էջ 109:
15. Նույն տեղում, էջ 7:
16. Հայ նոր գրակ. Պատմություն, հ.1, Եր., 1962, էջ 482:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**ՊԱՏՈՒ ԱԼԻՇԱՆԾ՝ ԿՐԹՈՂ և ԴԱՍՏԻՀԱՐԱԿՈՂ  
ԱՆԱՀԻՒՆ ԱՔՐԱՅԱՆ**

«Դ. Ալիշանը՝ կրթող և դաստիհարակող» հոդվածը քննության է աշնում հեղինակի մանկավարժական և դաստիհարակչական երկերը:

«Ազգային հատուկ դաստիհարակողություն», «Ամսոց բնական նշանները», «Ծանիր զքեզ», «Նվեր տղայոց» և այլ երկերում Ալիշանը խոսում է ազգային դաստիհարակության, բարոյական բարձր արժեքների, ընտանիքի և ծնողի դերի մասին: Բազմաթիվ հոդվածներում, բանասիրական և հայրենագիտական ուսումնասիրություններում Ալիշանը զնահատում է հայ ժողովրդական բանահյուսության դերը՝ շեշտելով այն հանգամանքը, որ հայկական մշակույթը ծնվում է ժողովրդից: Ահա թե ինչու է կարևորվում ազգային ավանդությունների և ավանդույթների հավաքումն ու պահպանումը:

**РЕЗЮМЕ**

**Г. Алишан – преподаватель и воспитатель  
Анаит Атаян**

**Ключевые слова:** филологическое исследование, национальное достоинство, моральные особенности, народное творчество, самопознание, семейное воспитание, патриотизм, познавательная роль, национальные ценности

Статья «Г. Алишан – преподаватель и воспитатель» исследует педагогические и воспитательные работы автора.

В «Особенностях национального воспитания», «Природных приметах месяца», «Подарке мальчикам», «Узнай себя» и в других произведениях Алишана говорится о национальном воспитании, формировании высших моральных норм и о главной роли семьи и родителей. В своих многочисленных статьях, филологических и краеведческих исследованиях Алишан оценивает роль армянского народного фольклора, отмечая, что армянская культура берет начало у народа и поэтому важны сбор и сохранение национальных легенд и традиций.

**SUMMARY**

**Gh. Alishan – a teacher and an educator  
Anahit Atayan**

**Key words:** philological study, national dignity, moral characteristics, folk art, self-studying, family upbringing, patriotism, cognitive role, national values.

The article “Gh. Alishan – a teacher and an educator” examines the author’s works on pedagogy and upbringing.

In “Features of national upbringing”, “Natural superstitions of month”, “Gifts to boys”, “Recognize yourself” and other works by the author such issues as national upbringing, the formation of the highest moral norms and the main role of the family and parents are mentioned. In numerous articles and philological studies of local history Gh.Alishan appreciates the role of Armenian folklore, noting that Armenian culture originates from the people and therefore it is important to collect and preserve national traditions and legends.